## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԱՐԴ ՉԿԱ

***1007.*** Կուրթան և Վարդաբլուր գյուղերի միջև.

Ի ՇԼ (1081) թուականութեան Հայոց ես կիւրիկե շինեցի...

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 122, «Ազգ. հանդ.», VII-VIII, 354, Ոսկյան, Գվ, 43:

***Ծանոթ.*** Այս արձանագրությունը մասամբ նմանվում է Կյուրիկեի 1086 թ. արձանագրությանը: Սակայն ըստ Լալայանցի, այն փորագրված է եղել մատուռի պատին: Ջալալյանցը վկայում է նաև գավթի գոյության փաստը: Նման նկարագրով եկեղեցական շենք Կուրթանի կամ Վարդաբլուրի շրջակայքում գոյություն չունի: Ըստ ամենայնի, շփոթմունք է:

### ԿՈՂԵՍ

Գյուղամիջում, աղբյուրի մոտ գտնվում է հին գերեզմանատունը: Այդտեղ է նաև Տուտիկ իշխանի տոհմական դամբարանը: Այն եղել է գետնահարկ և թաղածածկ, այժմ չնչին հետքերն են մնացել:

Դամբարանի գլխին՝ արևելքից, կանգնած են իրար կից երեք գեղաքանդակ խաչքարեր, ճարտարապետորեն ձևավորված ընդհանուր պատվանդանի վրա. խաչքարերից մեջտեղինը ավելի մեծ է, իսկ մյուսների խաչից ներքև պատկերված են հեծյալ ռազմիկներ, ձեռքերին երկար նիզակներ և սպառազեն, ձիերը քառատրոփ վազքի դիրքով են:

Ընդհանուր պատվանդանի արևմտյան երեսով գրված է արձանագրություն:

Դամբարանի շուրջ կան այլ հասարակ խաչքարեր և տապանաքարեր:

***1008.*** Երեք խաչքարեր. պատվանդանին, 4 տող.



ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՍ՝ ՏՈՒՏԻԿՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ԹԱՄԱՐ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ
ԴԵՂԵԿԱ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԵՐՐՈՐԴՈՒԹԻ[ՒՆ], ՎԱՍՆ ՍԱՍՆԱԻՆ ԵՒ ՔԱՒԹԱՐԱ, ԵՎ ՆՈՐԱ-
ԴԻՆԻՆ, Ո[Ր]-
Ք ԱՆՀԵՏ ԿՈՐԵՆ Ի ՁԵՌՍ ԱՆԱՒՐԻՆԱՑ ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԵՒ ԱՆՄԽԻԹԱՐ ԹՈՂԻՆ ԶՄԵ[Զ]:
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ ԵՒ ԶԾՆՈՂՍՆ ՄԵՐ: ԱՄԷՆ: Ի ԹՈՒ[ԻՍ] :ՈՂ: (1241):

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 127, «Ազգ. հանդ.», VII-VIII, 342, ՎՏ, 83, Շահինյան,ՀՄԿՀ, 43:

***Ծանոթ.*** Երրորդությունը այս դեպքում խաչքարերի խմբի անվանումն է: Այս հուշարձանը կանգնեցվել է անօրեններ (թաթարների) ձեռքով նահատակված հարազատների հիշատակին և ակներևաբար այս առիթով այստեղ հիմնվել է տոհմական դամբարան: Տուտիկն ու իր կին Դետիկը նվիրատվություն են արել Հովհաննավանքին, և պատարագ ստացել (Հովհաննավանք, արձ. 43):

**1009. *ԽԱՉՔԱՐ.*** փոքր, ընկած է Տուտիկի հուշարձանի մոտ, ստորին մասը՝ ջարդված, թևին և խաչից վեր, 3 տող.



ՊԱՐՈՆ ԳԵՂԱՒՆ
ՏՈՒՏԿԱՆՆ ԿԵ
[Ն]ՆԴԱՆՈՒԹ[ԻՒ]Ն:

***Ծանոթ.*** Իշխան Տուտիկի գերեզմանատան հուշարձանն է՝ բարեմաղթանքով կամ կանգնեցված է նրա պատվին, ընկած է կամարակապ դամբարանի մոտ:

*Առաջին տողի վերծանությունը բնական է (խմբ.):*

**1010. *ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** տափակ, երեսին ննջեցյալի քանդակ, գտնվում է նախորդի մոտ՝ երեսին, 1 տող.



ԹՎ[ԻՆ] ՌԳ (1554):

**1011. *ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ.*** նույն գերեզմանոցում, տեղահանված է, երեսին, 8 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱՄ[Ա]ՏՈ[Ւ]Ր[Ո]Ս ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ
ՆԱԶԵՐՍ, ԵՒ ԴԱՒԻԹ
ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶՍՔ ԽԱՅՉՍ ՎԱՍՆ ԾՆՈՂԱՑ ԵՒ
ԵՂԲԱՐՑ, ԵՒ ԷԼ ԶԱՒԱԿԱՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇ
[ԵՑԷՔ Ի ՔՍ: Ի ԹՎԻՍ]...:

***Ծանոթ.*** Թիվը եղել է պատվանդանի առաջին աստիճանին, որը ոչնչացված է:

**1012. *ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐ.*** կոթունաքևը պոկած, հենած գյուղամիջյան մատուռի պատին, թևերի եզրանիստերին.

. . . ԽԱՉՍ . . . ՐԻՆ
ՓԱՅԼԵՆ ԱՐԴԱՐ ՔՈՅ Հ
ԱՒԱՏԱՐ. . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . .
. . . ԱՄՈՒՍԻՆ
ԻՄ, ԵՍ՝ ՎԻԿԵԼ ԵՒ
ՆՈՒ . . . . . . . . . .
ԱՄԻ ՍԻՐԵԼ . . . . .

***Ծանոթ.*** Քարը չէչոտ բազալտ է, գրերը ջարդված և չափազանց դժվար են ընթերցվում: Սույն վերծանությունն էլ խիստ թեական է և ամենևին ոչ հուսալի:

***1013. ԽԱՉՔԱՐ***. փոքր, ընկած է նույն գերեզմանատան մեջ. ջարդոտված քիվին՝ 2 տող.



ՄԲ ՆՇԱՆ[Ս] Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆ,
Պ[Ա]Ր[Ո]Ն ՍԱՒՂՐԻԿԻՆ ԼԵՐ ՔԱՒԱՐԱՆ:

***1014. ՏԱՊԱՆԱՔԱՐ***. գյուղի կենտրոնում, տափակ, երեսին ձի, որից վեր 4 տող.



Թ[ՒԻՆ] :ՌՁԱ: (1632):
Ա[Յ]Ս Է Հ[ԱՆ]ԳԻՍՏ Վ[Ա]Ր[ՊԵՏ]
Տ[Ի]Ր[Ա]ՅՑՈՒ ՇՈՒԽ
ԻՆ:

***Ծանոթ***. ՎՐ գրված է առանց պատվի նշանի, վերծանվում է երկմտանքով, թեև հայտնի է, որ քարգործ վարպետներ են եղել անգամ բարձրաստիճան հոգևորականները: Վարդապետ (կամ վարդպետ) կարդալն անիմաստ է:

***1015. ԽԱՉՔԱՐ***. գերեզմանոցում, երկատված, քիվին և մակերեսին՝ 4 տող.



ՄԲ ԽԱՉ[Ս] ԱՒԳՆԱԿԱՆ
Թվ[ԻՆ] Պ[Ա]Ր[ՈՆ] ՄԷ
ՋԾԸ (1509) ԼԻՏ[ՈՍ]Ի
Ն:

***1016. ՏԱՊԱՆԱՔԱՐ***. գերեզմանոցում, մանրատառ, 6 տող.



ԱՅՍ Է ՀԱՆ-
ԳԻՍՏ Բ-
ԱՂԴԱՍ
ԱՐԻՆ Է: ԹՎ[ԻՆ]
ՌՃԾ (1701): ՀԱՅ-
ՐԸՆ ՏՐ ԱՆՏՈՆ:

***1017. ԽԱՉԱԲԵԿՈՐ***. Գյուղի արևելյան եզրում, պատի մեջ, դեղնավուն, թիկունքին.

. . . . . . . . .
. . . . . . . . .
. . . [Պ]ԱՐՈՆՈՒԹ[ԵԱՄ]Բ
Ջ ՃԱՆԱՊԱՐ. . .

***Ծանոթ***. Իմաստը չի պարզվում, անգամ վերծանության պատառիկն էլ երկմտելի է:
***. . . պարունութեամբ . . ճանապար:***

*1018. ԽԱՉՔԱՐ.* Գյուղամիջյան գերեզմանոցում, պարզ, թևերից վեր վարդակներ, խորանի անկյուններից կախված են հովհարաձև զարդեր, բիվին՝ 2 տող.

ԿԱՆ| ԳՆԵՑ |ԱՒ ԽԱՉՍ ԱՎ| Գ |Ն-
ԱՎ| ԱՆ |ՈՒԹԵ| ԱՆ | ԱՐՂՈՒԹԻՆ:

*Ծանոթ.* Քարը չնչոտ է, վատ հարթված, տառերը փորված են երեսանց և հազիվ են ընթերցվում: Լուսանկարից չի պարզվում՝ որոշ գրեր քայքայված են, թե՞ հապավված:
Վերծանությունը երկբայելի է:

ՅԱՂԴԱՆ

Գյուղում ու շրջակայքում ուշագրավ ճարտարապետական հուշարձաններ չկան, բացի արևելակողմի միաթռիչք հոյակապ կամրջից (XII-XIII դդ.), որը, ցավոք, ոչ մի հիշատակագիր չունի:

Գյուղի մեջ նորաշեն փոքր ու անշուք մի եկեղեցի է կանգնած: Տեղի հույն բնակիչները այն կոչում են Բանախա (Աստվածածին), որը շատ ավելի հնի վերակառուցումն է:

Արձանագրություններ կան խաչքարերի վրա, որոնք հանդիպում են գյուղի սահմաններում, դրանցից մեկը չափազանց գեղեցիկ ու համաչափ թևավոր հուշարձան է՝ կանգնած Ստեփանավան տանող ճանապարհի աջ կողմում:

*1019. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ.* կանգնած է ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա. թևերի շրջանակներին մեկ տողով, մեծ մասը ջարդոտված է.



. . . ՅՈԳՈՅ ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՒ ՎԱՍԱԿԱ . . .
ՁԱՒԱԿԱՑՆ ՏԱՑԻ . . .

*Ծանոթ.* Նման խաչքարեր կանգնեցվում էին հնում մեծ մասամբ որպես ճանապարհների ուղենիշներ, հավատո հանգանակներ, մարդաշատ տեղերում, բնակավայրերում, պաշտվող ծառերի տակ: Խաչքարը վերաբերում է XIII դարին:

*1020. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ.* բեկոր, ընկած գյուղամիջյան գերեզմանոցում, 3 տող.



Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ :ՈՁ: (1231) [ԿԱ-
ՆԳՆԵՑ[ԱՒ] ՁԽԱՉՍ ԱՌ
ԱԾ ԲԱՐԷԽԱՒՍ ԳՐԻԳ[ՈՐՈ]: